

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Մարգարյան ծննդատուն» Մոլ և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի տնօրեն՝ Բ.Գ.Թ. Բապիթ Գնդի Մելիք-Նուբարյան



«29» ապրիլի 2025թ.

**ԿԱՐԾԻՔ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Հասմիկ Հովհաննեսի Բարեղամյանի «Ձվարանային պահուստը որպես դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական ներուժի գնահատման նոր գործիք» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԴ 00.01՝ «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Վերարտադրողական տարիքում մանկածնման ֆունկցիայի խանգարումները և ձվարանային ցածր պահուստով պայմանավորված անպտղությունը շարունակում են մնալ արդիական հիմնախնդիրներ մանկաբարձագինեկոլոգիական պրակտիկայում: Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներն անպտղության հաղթահարմանը միտված մեթոդներ են, որոնց արդյունավետությունը, չնայած բժշկության առաջընթացին, շարունակում է մնալ ցածր:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհի հետազոտողների ուշադրությունը սևեռվում է դեռահաս տարիքի աղջիկների վերարտադրողական առողջության պահպանմանը: Հստակ է, որ կնոջ վերարտադրողական ներուժը մեծապես որոշվում է մանկության և սեռահասունացման շրջանում դեռահասի առողջական վիճակով: Դեռահասի ընդհանուր առողջությունը՝ սոմատիկ և գինեկոլոգիական հիվանդությունները, կյանքի որակը վերարտադրողական ֆունկցիայի պահպանման հիմքում ընկած կարևորագույն չափանիշներն են: